ԿԱՐԻՆԵ ՇԱԳԻԴԱՆՈՎԱ

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1910 - 1918 թթ.)

Արհեստակցական միությունների գործունեությունն անմիջականորեն պայմանավորված է կապիտալիզմի զարգացմամբ, կապիտալիստական հարաբերությունների ոլորտում ընդգրկված աշխատուժի՝ բանվորների տնտեսական, իրավական, քաղաքական ու կրթական դրությամբ և այդ դրությունը փոխելու, բարեփոխելու գիտակցության մակարդակով:

1910-ական թվականներին Ռուսաստանի տնտեսությունը որոշակի վերելք էր ապրում: Արդյունաբերությունը զարգանում էր կենտրոնացման, խոշոր միավորումներ՝ մոնոպոլիաներ ստեղծելու ճանապարհով: Արդյունաբերության մեջ, բանկային համակարգում վճռական դեր էին խաղում արտասահմանյան, մասնավորապես ֆրանսիական, այնուհետև գերմանական ներդրումները: Դրանք խոշոր չափերի էին հասնում Ռուսաստանի հարավի մետաղարդյունաբերության մեջ: Ռուսաստանի արդյունաբերության զարգացումն ակնառու էր. այն թևակոխել էր մոնոպոլիստական փուլը, դրա հետ մեկտեղ Ռուսաստանը տնտեսապես զարգացած երկիր չէր: Ճորտատիրական համակարգի կաշկանդող հարաբերությունները ամբողջովին չէին վերացել:

1910 - 1918թթ. չափազանց ծանր էր Ռուսաստանի բանվոր - ծառայողների սոցիալական վիճակը: 1910թ. տվյալներով բանվորները կազմում էին մի ստվարաթիվ բանակ՝ 12 մլն. մարդ[1]: Աշխատանքային օրվա տևողությունը 12 ժամ էր, ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը, անխնա կիրառվում էր կանանց և անչափահասների աշխատանքը: 1911թ. բանվորի տարեկան միջին աշխատավարձը կազմում էր 251ռ., արդյունաբերության որոշ ճյուղերում, ինչպես օրինակ տեքստիլ արդյունաբերության մեջ ավելի քիչ՝ 192 - 204ռ.[2]: Կյանքի թանկացման անկասելի և շարունակական պայմաններում նշված աշխատավարձը նույնիսկ չէր բավարարում բանվորի ընտանիքի նվազագույն պահանջները:

Այս նույն ժամանակաշրջանում Հայաստանում, որը լայնածավալ կայսրության մի մասն էր, տեղի էին ունենում նույն գործընթացները: Արդյունաբերության հիմնական, գերակա ճյուղը՝ մետաղագործությունը, որը հիմնականում

---

[1] Պետական Դումայի բոլշևիկյան ֆրակցիան, Մոսկվա, 1939, էջ 224, (ռուս):
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ.VI, Երևան, 1981, էջ 441:

տնօրինում էին ֆրանսիացիները, զգալի առաջընթաց էր ապրում[3]: Մետաղագործության կենտրոններն էին Ալավերդին՝ հյուսիս-արևմուտքում և Ղափանը՝ հարավ արևելքում: Բանվորական խավը գտնվում էր այդ երկու բնակավայրերում: Բանվորների թվաքանակի վերաբերյալ ստույգ տվյալներ մեր ձեռքի տակ չկան, հավաստի աղբյուրից հայտնի է, որ 1914թ. մարտին Ալավերդու պղնձամշակման ոլորտում աշխատում էր 2084 մարդ: Ինչ վերաբերում է աշխատավարձին, ապա այն Ռուսաստանի բանվորի միջին տարեկանի մակարդակին մոտ էր: Այսպես, Ալավերդու բանվորի օրեկան միջին աշխատավարձը տատանվում էր 70 կոպ. - 1ռուբ. 50 կոպ. սահմաններում[4]:

Չնայած ֆրանսիացի ձեռնարկատերերի ներդրումներին, պղնձարդյունաբերության օբյեկտներում աշխատանքի պայմանները լուրջ բարելավման կարիք ունեին, կյանքի ապահովագրության օրենքը չէր բխում աշխատավորի շահերից, իսկ բանվորների նյութական դրությունն անմխիթար էր: Նրանց իրական վիճակի մասին մոտավոր պատկերացում են տալիս մի շարք պաշտոնական արձանագրություններ ու զեկույցներ, որոնցում բնութագրական տվյալներ ու տեղեկություններ են հաղորդվում Ալավերդու ձեռնարկություններում գոյություն ունեցող անվտանգության տեխնիկայի խախտման, բանվորների աշխատանքային ու կենցաղային պայմանների, տուգանքների, դժբախտ պատահարների, անչափահասների քանակի վերաբերյալ[5]: Նշենք հետևյալ փաստը: 1914թ. հունիսին Ալավերդու պղնձաձուլական գործարանում աշխատել է 1623 բանվոր, այդ թվում 326-ն եղել են 15 - 17 տարեկան, 108-ը՝ անչափահաս[6]:

Քննարկվող ժամանակաշրջանը արհեստակցական շարժման ակտիվության, ինտենսիվության ու առաջադրվող ծրագրերի առումով բաժանում ենք երկու փուլի, նախափետրվարյան և ետփետրվարյան: 1917թ. փետրվարին կործանվեցին ցարական կարգերը, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակի շնորհիվ ստեղծվեցին նոր՝ ժողովրդավարական կարգեր, հիմնովին փոխվեց երկրի քաղաքական հասարակական իրադրությունը:

Առաջին փուլին նախորդող տարիները Ռուսաստանի պատմության մեջ հայտնի են «ռեակցիայի տարիներ» անվամբ: Կաշկանդված ու վարընթաց

---

[3] Բարխուդարյան Վ.Բ., Մուրադյան Դ.Ա., Հայաստանի աշխատավորները ցարիզմի դեմ մղված համաժողովրդական պայքարում, Երևան, 1988, էջ 12 - 13:
[4] ՀԱԱ, ֆ.Կ-4033, գ.2, գ.793, թ.16:
[5] Բանբեր Հայաստանի արխիվների, 1984, № 1, էջ 156, վավեր. №104, էջ 158, վավեր. №107, էջ 163, վավեր. №112 և այլն:
[6] Բանբեր Հայաստանի արխիվների, 1984, № 1, էջ 182, վավեր. №125:

շարժում էր ապրում հասարակական կյանքը, քաղաքական բռնությունները, հալածանքը երկրում ստեղծել էր վախի ու սարսափի մթնոլորտ, ընդհատակ էին անցել կամ լրիվ կազմալուծվել նաև արհեստակցական միությունները: Հայաստանը տակավին Ռուսաստանի կազմում էր, նրա ազդեցության ոլորտներում, իրավական համակարգում էին գործում Հայաստանի հասարակական, քաղաքական կազմակերպությունները:

Հայաստանի արհմիությունները իրենց գործունեությունը կարգավորում էին 1908թ. Թիֆլիսում կայացած ծառայողների կովկասյան արհեստակցական միությունների շրջանային համագումարի որոշումներով: Համագումարը եղել է բավականին ներկայացուցչական, մասնակցել են պատվիրակներ Բաքվից, Թիֆլիսից, Քութաիսիից, Վլադիկավկազից, Անդրկովկասյան երկաթուղուց: Համագումարը իր որոշումներում նշել է միավորվելու, համախմբվելու անհրաժեշտությունն ու կարևորությունն, այն նպատակները, որոնց իրագործմանը պետք է ուղղվեր արհմիությունների գործունեությունը: Հարկ է նշել, որ տնտեսական բնույթի խնդիրների լուծման հետ միասին առաջ էր քաշվում քաղաքական պայքարի խնդիր. «Կեցցե բանվորների դասակարգային կռիվը» կարգախոսով[7]:

Ծրագրային նշանակություն ունեցող այս համագումարի դրույթների գործադրությունը Հայաստանում համոզված չենք, թե լիովին հաջողվել է: Կարծում ենք մասամբ՝ գործադուլների հարցում: Այդ կապակցությամբ համագումարը որոշում չի կայացրել:

Նախափետրվարյան փուլում Հայաստանում տեղի են ունեցել մի շարք մեծ ու փոքր գործադուլներ, ցույցեր:

Վերոնշված փուլում Հայաստանի գործադուլային շարժման աշխուժացման համար որոշակի խթան է հանդիսացել Լենայի ոսկու հանքերի բանվորների գործադուլը և ցարական իշխանությունների դաժան հաշվեհարդարը գործադուլավորների հետ: 1913 - 1914թթ. գործադուլներ, հակակառավարական ցույցեր են տեղի ունեցել Ալավերդիում, Ղափանում, Երևանում, Ալեքսանդրապոլում[8]: Պահպանվել են վավերագրեր Ալավերդու բանվորների 1914թ. մարտի 16 - 23 տեղի ունեցած գործադուլի պահանջների, ընթացքի այլ մանրամասների վերաբերյալ: Վավերագրերի հեղինակները ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ են, որոնց ներկայացրածի հավաստիությունը կասկած է հարուցում որոշ չափով, մասնավորապես գործադուլի մասնակիցների թվի և տևողության վերաբերյալ: Տակավին 1913թ.

---

[7] ՀԱԱ, ֆ.Կ-1022, ց.2, գ.39, թ.1:
[8] Վարդապետյան Ա.Վ., Հայաստանի արհմիությունների պատմություն (1905 - 1965), Երևան, 1969, էջ 26:

օգոստոսի 8 -ին նահանգային ժանդարմերիայի վարչությանը հղած մի վավերագրում ասվում է. «Ալավերդու գործարաններում կարող է գործադուլ առաջանալ»[9]: Կարելի է ենթադրել, որ Ալավերդու գործարանների բանվորները համակված էին գործադուլային տրամադրությամբ թերևս կես տարի առաջ:

Գործադուլը Ալավերդու գործարաններում փաստորեն սկսվել է մարտի 10 -ին, տևելով ընդամենը մեկ օր՝ դադարել մարտի 11 -ին[10]: Սակայն տնօրինությանը գրավոր պահանջներ ներկայացնելուց և բավարարություն չստանալուց հետո, մարտի 16 -ին գործադուլը վերսկսվել է: Պահանջները տնտեսական բնույթ ունեին և ամփոփված էին 11 կետերում:

Պահանջագիրը ներկայացվել է անստորագիր:

Պաշտոնական վավերագրերում արհեստակցական միության խաղացած դերի մասին խոսք չկա, սակայն կարելի է ասել, որ արհմիությունը ունեցել է որոշակի դեր: «Այդ հարցը [գործադուլի] քննարկվել է գործարանում սրանից երեք օր առաջ ոչ մեծաթիվ պարագլուխների կողմից և ընդ որում նրանցից մեկը, իբրև թե, գնացել է Թիֆլիս այդ գործի համար համապատասխան ցուցմունքներ ստանալու», - գրում է գավառապետը մարտի 23 -ի իր զեկույցում[11]: Այն հանգամանքը, որ գործադուլավորներն իրենց պահանջները ներկայացրել են գրագետ ու որոշակի ձևակերպումով նույնպես վկայում է հօգուտ կազմակերպիչ ուժի առկայության մասին:

Իշխանությունները լրջորեն անհանգստացրել էր գործադուլը: Այդ են վկայում ոչ միայն բանակցությունները, այնտեղ ոստիկանության պաշտոնյաների ներկայությունը, այլ նաև այն հեռագրերը և զեկույցները, որ հղվել են նահանգական, երկրամասային բարձրագույն ատյանները, ընդհուպ մինչև մայրաքաղաք. մարտի 10 -ի և 23 -ի ընթացքում հինգ հեռագիր ու գրություն է ուղարկվել Ալավերդուց:

1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմը զգալի հարված հասցրեց արհմիութենական շարժմանը: Գործող սակավաթիվ կազմակերպությունների մի մասն անցավ ընդհատակ, մի մասն էլ լրիվ կազմալուծվեց: Կայսրությունը ապրում էր քաղաքական ու տնտեսական ճգնաժամ:

Ռուսաստանում 1917թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական բեկում մտցրեց պետության քաղաքական, տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում: Համառուսաստանյան կյանքի շրջանակներում էր նաև Անդրկովկասը, այդ թվում՝ Հայաստանը: Հեղափոխության ընձեռած

---

[9] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց.2, գ.793, թ.11:
[10] Նույն տեղում, թ.1 - 2
[11] Նույն տեղում, թ.11:

դեմոկրատական բարեփոխությունները, քաղաքական կապանքներից ազատագրումը, էյֆորիան համակել էր կայսրության ժողովուրդներին, որից զերծ չէին արհմիությունները: Ժողովրդական ուսուցիչները իրենց խանդավառությունն արտահայտեցին նույնիսկ իրենց կոչում. «Կատարվեց այն, ինչ բազում տարիներ եղել է մեզնից յուրաքանչյուրի բուռն ցանկությունը, որին այդպես ձգտում էր անօրինության լծի տակ հեծող մեր հայրենիքը:

Հին իշխանությունն ընկել է:

Ռուսաստանն դարձավ ազատ»[12]:

Փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծված ժամանակավոր կառավարությունը օրենսդրական կարգով փոփոխություններ մտցրեց երկրում, որոնք անմիջականորեն առնչվում էին արհեստակցական միություններին: Կառավարության կազմում, հեղափոխության դեմոկրատական, քաղաքական ծրագրին համապատասխան ստեղծվեց Աշխատանքի մինիստրություն, որն իր լիազորներն ուներ տեղերում՝ հանձինս կոմիսարի[13]: Այնուհետև աշխատանքին և աշխատողին վերաբերող բոլոր հարցերը լուծվելու էին կոմիսարի իրազեկությամբ՝ իր միջոցով: Երևանի նահանգում գործել է նահանգային կոմիսարը, որը որոշակի դեր է ունեցել: Այդ է վկայում նրան ուղղված, նրա կողմից առաքված և նրան վերաբերող վավերագրերի առկայությունը[14]: Երևանի նահանգում թեև թույլ, բայց գործել են Միջնորդ և հաշտարար դատական ատյանները: Դրանք բաղկացած են եղել գործատերերի և արհմիությունների ընտրովի, հավասար թվով ներկայացուցիչներից[15] և կոչված էին լուծելու ձեռնարկատերերի և բանվորների միջև ծագած աշխատանքային վեճերը:

Արհեստակցական միությունները երկար տարիներ պայքարել են հանուն 8-ժամյա աշխատանքային օրվա: Եվ ահա Երևանի նահանգային գործադիր կոմիտեն 1917թ. մայիսի 29-ին որոշում է ընդունել նահանգում 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու մասին[16], որը պիտի գործեր հունիսի 15-ից: Գործադիր կոմիտեն շտապեց դրա մասին տեղյակ պահել ժամանակավոր կառավարությանը, միաժամանակ հայտնել իր հետևյալ որոշման մասին. «... իր ձայնը միացնել ռուսական պրոլետարիատի հզոր ձայնին», որը «ժամանակավոր հեղափոխական կառավարությունից» պահանջում է դեկրետ ընդունել

---

[12] ՀԱԱ, ֆ.Պ-217, ց.1, գ.4, թ.40, Հայ ժողովրդի պատմություն, հ.VI, Երևան, 1981, էջ 609:
[13] ՀԱԱ, ֆ.Պ-220, ց.1, գ.1, թ.14:
[14] Նույն տեղում:
[15] Նույն տեղում, թ.14 շրջ:
[16] ՀԱԱ, ֆ.Պ-119, ց.1, գ.1, թ.17:

8 -ժամյա աշխատանքային օր անհապաղ մտցնելու մասին առանց վնասելու երկրի պաշտպանության շահերին[17]:

Աշխատանքի մինիստրությունը շարունակեց իր գոյությունը Օգակոմի կազմում: 1918թ. հունվարի 14 -ին հրապարակվեց այդ մինիստրության, որը կոչվում էր Աշխատանքի գործերի կոմիսարիատ, «Բանվորների և ծառայողների աշխատանքի ընդունման և ազատման կանոնադրությունը»[18]:

«Կանոնադրությունը» հատուկ օրենսդրությամբ կարգավորում էր բանվոր - ծառայողների և գործատերերի աշխատանքային փոխհարաբերությունները՝ ելնելով գերազանցապես բանվոր - ծառայողների շահերից: «Կանոնադրության» առաջին կետում ասվում է. «Անդրկովկասի սահմաններում ձեռնարկատերը բանվորներին և ծառայողներին աշխատանքի է ընդունում և ազատում արհեստակցական միության կամ ֆաբրիկա-գործարանային կոմիտեի համաձայնությամբ»[19]:

Մնացած 12 կետերը բացատրում, լրացնում են առաջին կետը: Մասնավորապես կանոնակարգվում են, հստակեցվում բանվոր - ծառայողների իրավունքները աշխատանքի վայրում, այն պայմանները, որոնց առկայությամբ ձեռնարկատերն իրավունք ունի աշխատանքից ազատելու բանվոր - ծառայողին:

«Կանոնադրությունը» խոշոր նշանակություն ունեցավ արհմիությունների գործունեության աշխուժացման գործում: Անդրկովկասի, այդ թվում Հայաստանի տնտեսությունը քայքայված էր, գործազուրկների բանակն ամեն օր համալրվում էր հարյուրներով և նման օրենսդրական գործառույթը կոչված էր պաշտպանելու բանվոր - ծառայողների շահերն ու իրավունքները: «Կանոնադրությունը» կիրառվեց նաև հետագայում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում:

Ակնառու վերելք ապրեցին արհեստակցական միությունները Հայաստանում: Դեմոկրատական ազատությունների ալիքի վրա նոր շունչ ստացան իրենց գոյությունը հազիվ պահպանած միությունները, ստեղծվեցին նորերը: Հայաստանի առաջին խոշոր քաղաքում՝ Ալեքսանդրապոլում հեղափոխությունից հետո գործում էին փոստ-հեռագրատան աշխատողների, տպագրիչների, կոմունալ տնտեսության աշխատողների, գործակատարների, դերձակների, կոշկակարների, պայտագործների, տպագրիչների, հացթուխների, քաղաքային ինքնավարության և այլ նորաստեղծ արհեստակցական միությունները[20]:

---

[17] Նույն տեղում:
[18] ՀԱԱ, ֆ.Պ-220, ց.1, գ.1, թթ. 2,14:
[19] Նույն տեղում, թ.2:
[20] Վարդապետյան Նշվ.աշխ., էջ 30 - 31:

Ալեքսանդրապոլից ետ չէին մնում Երևանն ու մյուս բնակավայրերը: Երևանում ծնունդ առան Հայաստանի աշակերտական ընդհանուր միությունը, Երևանի քաղաքային ինքնավարության ծառայողների, Առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների ծառայողների և այլ միությունները[21]: Շարունակում էին գործել Հաստատություններում, մասնավոր անձանց ու անհատների մոտ աշխատող հասարակ ծառայողների, դերձակների, հացթուխների, գործակատարների, կոոպերատիվների ծառայողների, Պետական ծառայողների, կոմերսանտների և այլն: Հայաստանի այլ բնակավայրերում ստեղծված ու գործող արհմիություններից կարելի է նշել Սուրմալուի Արհեստավորների արհմիությունը:

Եռանդուն ջանքեր էին գործադրվում նոր միություններ ստեղծելու ուղղությամբ: Երևանի նահանգի տարրական դպրոցների ժողովրդական ուսուցիչների կազմկոմիտեն 1917թ. մայիսին հատուկ կոչով դիմել է նահանգի բոլոր ժողովրդական ուսուցիչներին, անկախ ազգությունից, միավորվել և ստեղծել արհմիություն, որի նպատակները պետք է համապատասխանեն նոր ժամանակների պահանջներին[22]: Նույն թվականի մայիսի 6-ից 15-ը կայանալիք ժողովի քննարկման է ներկայացվել կանոնադրության նախագիծը[23]: 1917թ. սեպտեմբերին նշված արհմիությունն արդեն գործում էր: Նոր արհմիությունների ստեղծման յուրահատկությունների վերաբերյալ ուշագրավ վավերագիր է Երևանի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների կազմկոմիտեի արհմիություն կազմակերպելու կոչը[24]: Այն առաջարկում է տեղերում արդյունաբերության առանձին ճյուղերում ստեղծել միություններ, որոնք ապագայում կմիավորվեն մի ընդհանուր միության կազմում[25]:

Ետփետրվարյան փուլում աշխուժացավ տեղական ֆաբրիկա-գործարանային կոմիտեների գործունեությունը: Այս կոմիտեները ստեղծվել էին նախորդ տարիներին, գործում էին արհմիություններին զուգահեռ և իրականացնում էին նույն գործառույթները: Հայտնի են Ալեքսանդրապոլի Ռազմա-արդյունաբերական, Սարիղամիշի երկաթուղային կոմիտեները և այլն:

Քննարկվող փուլում ոչ միայն ընդլայնվում էին արհմիությունների ընդգրկման շրջանակները, ասպարեզ մտնում նոր ճյուղային միություններ, այլև

---

[21] ՀԱԱ, ֆ.Պ-218, ց.1, գ.1, թ.70:
[22] ՀԱԱ, ֆ.Պ-217, ց.1, գ.4, թթ. 40,46:
[23] Նույն տեղում, թթ. 47 - 50:
[24] ՀԱԱ, ֆ.Պ-119, ց.1, գ.26, թ.18:
[25] Նույն տեղում:

ավանդական գրեթե կանոնակարգված, տնտեսական, իրավական ու մշակութային խնդիրների հետ միասին կանոնադրություններում առաջ էին քաշվում քաղաքական բնույթի խնդիրներ: Այդ առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում Երևանի Արդյունաբերական ձեռնարկությունների կազմկոմիտեի կոչը, որում շարադրված են միության խնդիրները՝ կանոնադրության հիմնական դրույթները: Առաջարկվող արհմիությունը բնութագրվում է իբրև քաղաքական-տնտեսական: Առաջ է քաշվում հարցերի երկու խումբ՝ տնտեսական և քաղաքական: Տնտեսական հարցերի վերաբերյալ առաջարկությունները նորություն չեն պարունակում: Առավել հետաքրքրություն են ներկայացնում քաղաքական բնույթի առաջարկությունները Ըստ կոչի ապագա արհմիության անդամը ազատ է իր քաղաքական կողմնորոշման մեջ, այսինքը կարող է պատկանել իր հայացքներին համապատասխան կուսակցության, բայց պայմանով, որ ապագա Սահմանադիր ժողովի, պառլամենտի ընտրությունների ժամանակ իր ձայնը տա այն թեկնածուներին, որոնք ծանոթ են արդյունաբերության կարիքներին ու խնդիրներին:

Քաղաքական խնդիրներ են հետապնդել տվյալ ժամանակամիջոցում գործող բոլոր արհմիությունները: Հայաստանում գործող արհմիությունները մասնակցում էին օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների աշխատանքներին հանձինս իրենց ներկայացուցիչների, որոնք ընտրվում էին ըստ անդամների թվի՝ տվյալ միության ընդհանուր ժողովում, կամ վարչության կողմից: Այսպես, յուրաքանչյուր 20, կամ սահմանվածի կեսից ավելի արհմիության անդամ ունեցող կազմակերպությունն իրավունք ուներ մեկ պատգամավոր լիազորելու: Մասնակցության նպատակն է եղել պաշտպանել արհմիության անդամների շահերը: Արհմիությունները հանդես են եկել տեղական բանվորների դեպուտատների խորհուրդներին ուղղված վերջնագրային բնույթի պահանջներով ու առաջարկություններով: Երևանի Հաստատություններում, մասնավոր անձանց և տներում աշխատողների, ծառայողների արհմիությունը հրաժարվում էր 1% չափով աշխատավարձից հօգուտ Երևանի բանվորների դեպուտատների խորհրդի հատկացումներ անելուց իր ներկայացրած հրահանգը չհաստատելու պատճառով և միաժամանակ սպառնում է ընդհանուր գործադուլով: Քաղաքական պահանջներ է ներկայացրել Երևանի կոոպերատիվների ծառայողների, դերձակների, հացթուխների և գործակատարների արհմիությունների ներկայացուցիչների ժամանակավոր բյուրոյի մասնավոր խորհրդակցությունը, որը տեղի է ունեցել 1917թ. վերջերին: Բյուրոն որոշակի պահանջներ է առաջ քաշել կապված աշխատանքի կոմիսարի ընտրության և գործառույթների հետ:

Հայաստանի արհմիությունները ետփետրվարյան փուլում՝ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում, աշխատանքներ են տարել երկու ուղղություններով ևս. կազմակերպչական և տնտեսական:

Արհեստակցական միություններն իրենք շահագրգռված էին իրենց շարքերի ընդլայնմամբ մի կողմից, մյուս կողմից՝ նրանց միավորմամբ: Միասնական համախումբ ուժերով ավելի հեշտ է պայքարել ու հասնել առաջադրված խնդիրների լուծմանը: Գործում էր միավորման երկու սկզբունք՝ ճյուղային և տարածքային: Արհմիութենական ժողովներում միավորման անհրաժեշտության հարցը հաճախ էր քննարկվում: Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության ծառայողների արհմիությունը 1917թ. ապրիլի 27-ին տեղի ունեցած խորհրդակցությունում ընտրում է վերոհիշյալ միության և Պետական ծառայողների միության բյուրո՝ ղեկավար մարմին[26]: Վերջինիս ստեղծման հարցը քննարկվել էր նախապես[27]: Այստեղ խոսքը գնում էր Ալեքսանդրապոլի տարածքում ըստ մասնագիտության խոշորացման մասին: Արհմիությունների ժողովներում, խորհրդակցություններում քննարկվել և համապատասխան որոշումներ են ընդունվել կանոնադրության հաստատման ու նրանում փոփոխություններ մտցնելու, փոխօգնության դրամարկղ ստեղծելու և այլ նմանատիպ հարցեր:

Արհեստակցական միությունները փորձում էին առաջ քաշել և լուծել ինչպես առանձին անհատների վերաբերող այնպես էլ ընդհանուր տնտեսական ու իրավական բնույթի հարցեր: Գործատերը միշտ չէ, որ հետևում, ղեկավարվում էր գործող օրենսդրությամբ, հատկապես բանվոր-ծառայողին աշխատանքից ազատելու պարագայում: Արհմիությունը հանդես էր գալիս ի պաշտպանություն աշխատողի շահերի և իրավունքների: Ծառայողների աշխատավարձի բարձրացման, նրանց աշխատանքից ազատվելու կամ ձեռնարկությունը լուծարելու պատճառով աշխատանքը կորցնելու դեպքում նրանց հասանելիքի վճարումների մասին է Երևանի ծառայողների 1917թ. օգոստոսի 6-ի գրությունը, ուղղված Երևանի կոմերսանտների արհմիությանը: Իրենց որոշումներն ի կատար ածելու նպատակով արհմիությունները դիմել են բանվորների դեպուտատների տեղական խորհուրդներին և ինչպես վկայում են վավերագրերը, աջակցություն չեն ստացել[28]:

Որքան էլ ոգևորված էին Ռուսաստանի ժողովուրդները, այդ թվում հայերը նոր, դեմոկրատական կարգերի հաստատմամբ, սակայն երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի կազմալուծումը, շարունակվող պատերազմը

---

[26] ՀԱԱ, ֆ.Պ-218, ց.1, գ.1, թ.46:
[27] Նույն տեղում, թթ.22, 25, 34:
[28] ՀԱԱ, ֆ.Պ-119, ց.1, գ.11, թ.7 և շրջ:

ծայր աստիճանի աղքատության էին հասցրել ժողովրդի լայն խավերին: Կենսականորեն անհրաժեշտ մթերքների գները բարձրանում էին թռիչքաձև: Եվ այդ բոլորը բնականաբար չէր կարող չհարուցել բանվոր - ծառայողների դժգոհությունը: Բանվոր - ծառայողների կողմից առաջ էին քաշվում տնտեսական բնույթի, առաջին հերթին՝ աշխատավարձի բարձրացման պահանջներ: 1917թ. մայիսի 16 -ին Երևանի «Լույս» տպարանի աշխատողները տնօրինությանը ներայացնում են հինգ կետով ձևակերպված ու հիմնավորված առաջարկություններ. «Նկատելով որ ապրելու պայմանները օրեցօր դժվարանում են և ապրելը անկարելի է դառնում, ստիպված ենք կարգ մը առաջարկներ անելու Ձեզ», - գրում են նրանք[29] և վավերացնում դիմումը տասնմեկ հոգիանոց կոլեկտիվի ստորագրություններով:

Այնուհետև տպարանի աշխատողները իրենց պահանջների բավարարման համար նշանակում պայմանաժամ՝ նույն թվականի մայիսի 20 -ը և տնօրինությանն առաջարկում են բանակցությունները վարել իրենց ընտրած ներկայացուցիչների հետ: Հակառակ պարագայում սպառնում են, հայտարարելով թե. «Ներկայացնելով մեր անհրաժեշտ պայմանները, առանց որոնց գործադրության մենք անկարող ենք աշխատել ...»[30]:

1917թ. մայիսի 16 -ին գործադուլ են սկսում Երևանի «Ամպեր» ընկերության բանվորները: Վավերագիրը վկայում է, որ գործադուլի պատճառը տնտեսական էր: Կարծում ենք, որ «Լույսի» և «Ամպերի» գործողությունները նույն օրը սկսվելը պատահական զուգադիպություն չէր: Ենթադրվում է կազմակերպիչ մարմնի, տվյալ պարագայում արհմիության, ներկայությունը: Երևանի նահանգային գործադիր կոմիտեն, նկատի ունենալով «Ամպերի» բանվորների գործադուլի բացասական ազդեցությունը քաղաքի կյանքի բնականոն ընթացքի, ինչպես նաև երկրի պաշտպանական համակարգի վրա, ընդառաջելով քաղաքային վարչության առաջարկությանը, նիստի է հրավիրել կողմերին և բանակցությունների արդյունքում կողմերը հանգել են համաձայնության:

Քննարկվող ժամանակամիջոցում տեղի են ունեցել նաև տեղական նշանակությամբ այլ գործադուլներ, ցույցեր: Սակայն դրանց դերն այլևս կարևոր չէր: Երկիրը կանգնած էր քաղաքական խոշոր ցնցումների առաջ: Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից ու անկախացումը, թուրքական ինտերվենցիան, Անդրկովկասի երեք հանրապետությունների պատմական ասպարեզ մտնելը և Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումը:

---

[29] Նույն տեղում, գ.12, թ.1 և շրջ:
[30] ՀԱԱ, ֆ.Պ-119, ց.1, գ.12, թ.1 շրջ: